ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«19» հունվարի 2026թ. N 07-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 08-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N Ե/1205-25 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 29-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 08-Ա հրամանում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) նախաբանում «10.1-ին հոդվածի» բառերից հետո լրացնել «3-րդ մասի» բառերը,

2) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հաստատել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 27-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ներկայացված՝ քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի դրույթների մեկնաբանությունները երկաթբետոնե հիմնակմախքով շենքերի համար» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 24 կրեդիտ:

3) 1-ին կետից հետո լրացնել նոր՝ 1.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հաստատել «ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի դրույթների մեկնաբանությունները երկաթբետոնե հիմնակմախքով շենքերի համար» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

1/19/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2026 թվականի փետրվարի 19-ի N 07-Ա հրամանի

**«ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի դրույթների մեկնաբանությունները երկաթբետոնե հիմնակմախքով շենքերի համար»**

**միջոցառման ժամանակացույց**

| Հ/Հ | Ամսաթիվ | ժամ | Թեմայի անվանում | Դասախոսի անուն և ազգանուն | Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը | Միջոցառման կրեդիտները | Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը | Մասնակցության վճարի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |
| 1 | Մարտի 3-21 | 18.30 | «ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի դրույթների մեկնաբանությունները երկաթբետոնե հիմնակմախքով շենքերի համար» | Տիգրան Լեոնիդի Դադայան, ՇԿ ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Լուսինե Գուրգենի Կարապետյան, ՇԿ ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, Տերյան 105 վերապատրաստման դասընթաց | 24 կրեդիտ | 01-06, 34 մասնագիտություններ | 96000 ՀՀ դրամ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Հունվարի 19-ից փետրվարի 9-ը | 18.30 | «ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի դրույթների մեկնաբանությունները երկաթբետոնե հիմնակմախքով շենքերի համար» | Տիգրան Լեոնիդի Դադայան, ՇԿ ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Լուսինե Գուրգենի Կարապետյան, ՇԿ ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, Տերյան 105 <u>վերապատրաստման դասընթաց</u> | 24 կրեդիտ | 01-06, 34 մասնագիտություններ | 96000 ՀՀ դրամ |